

ԱԶԳԱՅԻՆ ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆ

Սահ Բ'.

ՂԱՆԱԳԱՐՏՈՐԴԻ աշխարհայա-  
ծուք կամեցեալ տիպս իմն կերպարա-  
նաց տալ արդի հանգամանաց հայոց,  
ասեն . Եւս ազգ եռանդուն է և աշ-  
խատասէր, թշնամի դատարկ կենաց,  
և ամենայնի ձեռնհաս . չիք ինչ ապրու-  
տամբ 'ի զօրութենէ հայոյն . անխոնջ  
պնդութեամբն յաղթէ ամենայն դժ-  
նեայ դիմակալութեանց . աչալուրջ  
է, և սրահայեաց տեսութեամբն ա-  
ռաւելու քան զամենայն ազգս հայն  
շահասէր : Ի գիւտ ընչից յածի ընդ  
աշխարհ, արշաւի անաշխատ, հասա-  
նէ ընդ բնաւ : Ուր ուրեք գնացի, ա-  
սէ ոմն, տեսի զի գրաւեալ էին հայք  
զվաճառականութիւն երկրին . փար-  
թամագոյնք 'ի վաճառականս Պոր-  
նէոյ, Սուամարա և Երաւ կղզեաց  
հայք են . 'ի հնդկիս, 'ի Պարսս, 'ի  
կովկասային աշխարհան զառաջին տե-  
ղին հայքունին . և յապուշ կրթիմք 'ի  
տեսանեին զհայ վաճառականս մինչև  
'ի Վանթոն շինաց : Եթէ յոտին  
կայր այս ազգ վաստակասէր, ըստ վա-  
ճառականութեանն կարէր մրցել և  
ընդ Ենգղիացւոցն . քանզի 'ի միջնաշ-  
խարհս Բփրիկոյ՝ ուր չև ևս կոխեալ  
էին ոտք համբաւատենչ Ենգղիա-  
ցւոյն, հայք նախկին միջամուխ լեալ  
յանձինս տարան զբարութիւնս եր-  
կրին, և վարժապետ կացին համօրէն  
Եւրոպայ յառս և 'ի տուրս վաճա-  
ռաշահութեան : Եւս ամենայն բա-  
րեմանութիւնք 'ի մի լծորդեալք ընդ  
ամրութեան մտացն, ընդ անպարտելի  
արութեան սրտին և ընդ պնդակազմ  
հաստատութե մարմնոյն և ընդ բա-  
րեխառն բնաւորութեան, արգոյ և  
պատուական ցուցանէ զնա և յաչս  
օսմանեան մեծի տէրութեանն . վասն

որոյ հայք 'ի սկզբանէ նոցին և այսր  
ունին միշտ զտեսչութիւն արքունի  
գործոց, զհազարապետութիւն կու-  
սակալաց կողմանց կողմանց, զտնտե-  
սութիւն և զգործակալութի զօրաց և  
բանակաց, և 'ի գործս ձեռնարուեստ  
ճարտարութեց ծայրացեալք են քան  
զամենայն արևելեան ազինս : Վար-  
ձեալ և 'ի Ռուսս, 'ի Պարսս և Երգիպ-  
տոս կարևոր համարեալ են հայք 'ի  
շինութիւն քաղաքաց և գիւղից :

Սակայն աստանօր խնդիր մի կա-  
րևոր յուզէ զխորհուրդս իմ հարցա-  
նել . զի է զի ազգ այսպիսի՝ պատուա-  
կանութե գերածայրեալ, կայ արդ-  
յաղէտս տարակուսի ըստ ուսման,  
ըստ գիտութեան, և ըստ իմաստու-  
թեանն այնչափ չքաւոր : Եթէ ամե-  
նայնի ձեռնհաս զանձն ընծայեցու-  
ցանէ, էր ապա իբրև անիմաստ և ան-  
արուեստ այպանիցի յիւրոց նախատ-  
չաց . եթէ մտավարժ և ճարտար է 'ի  
կենցաղօգուտ մակացութիւնս և 'ի  
գարութիւնս, ապա զի է զի նիրհէ  
անյարիր 'ի խաւարի անուսմնութեանն :  
Իամ է արդ հանդէս առնուլ և տե-  
սանել եթէ հիմ լքեալ է ազգ մեր  
'ի ջանս ուսումնասիրութեան, և 'ի  
քաղաքականութեան յետնեալ :

Հանգամանք ժամանակացն, աղ-  
քատութեանն աղէտք, ձեղքումն եղ-  
բարց յիրերաց արկին զազգ մեր յայն  
ողորմ վիճակ յոր տեսանեմքս զնա :

Ա. Հանգամանք ժամանակացն այն  
են, զի յաւուրց անտի Ռազրատունի  
տեսարցն տեսարան իմն քստմնելի ցու-  
ցանէր աշխարհ հայոց : Կայնժամ  
զանդորր ծովու բերէր զտիպ . իսկ  
յայն խուղայոյզ ժամանակն յարևե-  
լից և յարևմտից, մանաւանդ թէ և  
յամենուստ իսկ 'ի մեր աշխարհ ասպա-  
տակէին խուժանք ալեաց, և 'ի յոր-  
ձանապտոյտ սպառնալիս ահ և եր-  
կիւզ զամենեքումք հեղուին . ըզ-  
հրաշալի դաստակերտս մերոց դիւցա-  
զանց իբրև զթեթև լաստափայտս ա-  
լիք յալեաց առնուին, և ընդ ժայռս  
յանինայ հարեալ խորտակէին . և

1 Տես երես 201 :

զեղկելի նաւաստին զազգն յոգիս ապաստան յերկիւղ մահու պաշարէին: Յայն խուան ահեղի, յայն տազնապ դժոխալուր, տես զաղի և զողորմ տեսիլ նաւազին. շատք խորասոյզ կորընչին, սակաւք անզոր փայտին ապաւինեալ՝ զանձինս թափել հնարին, և հազիւ կաղք և կոյրք և հաշմք և խեղանդամք ոմանք յեզերս ծովուն այնորիկ մեծի կամ յանբեր կղզիս մերկ և կողոպուտ ժողովեցին զանձինս. յորոց մեքս պայազատեալ և սերեալ անկած և ապիկար ժողովուրդ: Աւագ...

Վեկավարք ճարտարք և կորովաբիբ վարիչք մեր մատնեցան առ հորիկ ՚ի յորձանս ուխիցն, և յարածուփ սպառնալեօքն սասանեցաւ մերս աշխարհ, որ լին էր և ակաղձուն երկնատուր պարգևօք: Արդ որ այսոցիկ ականջալուր իցէ, և սոցին հանգոյն չարագուշակ պատահարացն ականատես, մարթիցի յանձն խրախուսել, և դարձեալ նաւազնաց լինել յայն ծովալեսաստ:

Տես, զի սպառնալիք բռնաւորաց, յարձակմունք թնամեաց, տառապանք և վիշտք յանակնկալս ՚ի վերայ հասեալք, և յեղակարծ վրդովմունք և աւերք աշխարհաց եղեն պատճառք թշուառութեան մերոյ. թշուառութիւն ոչ առժամեայ և վեր ՚ի վերոյ, այլ յաւերժական, այլ անհերքելի: Քանզի հարստահարութիւնք մի ըզմիոյ կնի կուտակեալք ածին զմեօք թմբրութիւն անփարատելի և երկչտուութիւն յուսահատ. մինչև հարկ արարին մեզ մոռանալ զքաջութեան խորհուրդս և զգործ. որպէս եթէ անգործութիւն, ապշութիւն և անյառաջադէմ կեանք իցեն մեր համծին և համատի բնաւորութիւնք: Այլ կարի իսկ քաջ. քանզի կործանմամբ քաղաքաց և կորստեամբ հայրենի յիշատակաց ՚ի միտ առաք, եթէ անմարթէ ՚ի մերում աշխարհիս կանգուն կալ և յաւերժանալ համբաւոյ և յիշատակաց. յափշտակութեամբ ընչիցն և ստացուածոց բազում քրտամբ մթերելոց անեղծ տպացաւ ՚ի սիրտս

մերոցն առ հասարակ, թէ յաճախու. թիւն կարասեաց և յոլովութիւն ընչից ոչ միայն աւելորդ, այլ և բազում կրից պատճառք են հանդերձ վտանգաւ կենաց: Այս թմբրութիւն տեէ մինչև ցաւուրս մեր՝ այնպէս զի ամենայն ոք անփորձ և պակուցեալ, յոչինչ լինի ձեռնամուխ, երկուցեալ յանյաջող ելիցն: Այլ յայն հասոյց զմեզ այս թմբրութիւն անիծապարտ, զի առաքաստեալ աչք մտաց մերոց՝ ոչ և ս կարեմք առնուլ ՚ի միտ զթշուառութիւն մեր. վասն այնորիկ և զարգացումն գիտութեան և արուեստից և քաղաքականութեան յոչինչ համարեալ է առ մեզ: Անձաշակ գոլով երջանկութեան կենացն, երանութի համարիմք զօրն՝ յոր թէ վիճակեսցի մեզ վայելել անվիշտ, և զանուսումնութեան զաւուրս համարիմք լոյս ծագեալ մեզ ՚ի տեառնէ:

Ար երբեմն, տեսի ծեր ալևոր, որ կապէր ընդ վարդապետին վասն որդւոյն իւրոյ, և ասէր. « Ինթերցումն և դպրութիւն չեն օգտակարք կենաց մարդոյ. թող երթիցէ որդին իմ ՚ի շուկայն, և կրթեսցի նստել ՚ի հանթի և ուսցի հայթայթել զաւուրն պարէն: Հարքն մեր ապաքէն առանց այդր դառն գերուութեան կեցին ցբարուք ծերութիւն. և ես, գոհութիւն Աստուծոյ, յայս ալևոյթ հասի անուսումն և առանց դպրութեան. կերի զաւուրն հացիկ, և ոչ մտի յանկողին քաղցու. շատ է թէ և որդին իմ յիմ չափ հասեալ, փառս տացէ Աստուծոյ, և ինձ շնորհս՝ զի զերծի զնա ՚ի խիստ ծառայութենէ ուսման, և ՚ի բանտէ դպրոցաց »:

Ի լսելն զայս յապուշ հարայ ընդ անմտութիւն այնքանոյ առն, որ յեցեալ ՚ի ծերութիւն պատկառելի տակաւին և ս չուսաւ եղկելին զանգին յարգ գիտութեան. ամբարձեալ յիմաստութեանն հասակ, համակ ալևոր, ողջոյն խորշովեալ, այլ եղունկ, զի չև էր ծագեալ ՚ի դէմն նորա ի-

մաստութեանն նշոյլ : Արծէ չուաւականն , թէ ինքն միայն անգէտ գուրով դպրութեան և անբաժ յիմաստից՝ ուտէ զայն հացիկ . իսկ որք հետամուտքն իցեն այնմ՝ զուրկ ՚ի պատառոյ հացէն : Այ կարաց իմանալ եօթանասնամենին , թէ որ սիրէ զիմաստութիւն՝ հանգիցէ ՚ի բարութեանն նորա : — Ազգումք են որք հանգոյն սմին գերուի և դառն ծառայութի համարին զպարապէն յուսումն , և բանտ՝ զվարժոցս ուսմանց և դըպրութեան . և տակաւին չեկն ՚ի նոցա ծանօթութիւն , եթէ ուսումն գիտութեան ոչ միայն մտաց , այլ և մարմնոյ առաջնորդէ յերջանկութիւն , և կենացն ՚ի բարօրութիւն . ոչ ծանեան զիրացն ճշմարտութիւն , եթէ Ալլարոպ կարի շատք աղքատք ըստ վիճակի և աննշանք ոմանք էին երբեմն , և արդուսմամբ միայն հասին ՚ի բարձս աւագութեան , և պատիւս և գովութիւս ըստ արժանեացն ժառանգեցին . բազումք և ՚ի նշանաւոր գիտնոց Ալլարոպայ , ընդ որս յակճիւս զարմացեալ կան ամենայն ազինք , անաւագք են ըստ տոհմի և տառապելոց որդիք : Իսկ առ մեզ եթէ տեսանիցեմք զոք որ յորդոր այլոց լինիցի յուսումն գիտութեան և արուեստից , իցեն արդեօք որ ՚ի զառանցանս համարեցին զբանս նորա , և այլք գրեցցեն զնա խելայեղ և գլխովին իսկ թափեալ ՚ի մտաց :

Այլ այսուհետև քննեսցուք և ըստ արուեստից : Արպէս անախորժ է լսել զմի և զնոյն աղէբախ , այսպէս տաղտուկ արդեօք յեղյեղեալն յինէն բազում անգամ բան , թէ կացեալ են տակաւին մտացն աչք մերոյ ազգիս , և չկարէ ընտիր առնել ՚ի մէջ բարւոյ և և ոչ բարւոյ , ՚ի մէջ փասու և շահուանձին : Վանզի օրինակ իմն , ոչ ապաքէն ասր , կանեփ , բամբակ և մետաքս բազում ՚ի մերմէ աշխարհէս իջանեն անգործ և ումպէտ , և յաճին շրջին ընդ գործարանս Ալլարոպայ , և անտի գործեալ և կոկեալ վերստին առ մեզ

ելանեն , մէն մի զցփսեաց՝ զուխայի՝ զբեհեզոյ և զպատառաց և զազգի ազգի կերպասուց առեալ կերպարան : Ալ մեք առ ՚ի ընուլ զպէտս կենաց մերոց՝ զբերս աշխարհին մերոյ հանդերձ փնասու հարկիմք յօտարաց վերստին ստանալ ծանրագնոյ : Այ ապաքէն երկաթ և պղինձ և այլ հրահալեւեացն ազգք հատեալք ՚ի մերոց բովուց , ՚ի զէնս , ՚ի հրացանս և յայլ պէսպէս անօթս գործեալ գան ՚ի մեր պիտառութիւն : Այ ապաքէն որդն ազնիւ , և բազմերփեան գունոցն դեղք ՚ի մէնջ սփռին ընդ աշխարհ , և դարձեալ առ մեզ անցանեն ըստ պէսպիսութեան երանգոցն ներկեալք . ըստ այսմ իմասջիր զայն ամենայն որ մերոյ աշխարհիս են սեպհական պարգևք : Օ այս ամենայն , որպէս ասացի , առ ապշուութե մերոյ և առ անգիտութե՝ օտարք կապտեն ՚ի մէնջ դիւրագնոյ , և զհանեալն վերստին առ մեզ դարձուցեալ , և զմընացուածս շահուն բառնան և տանին : Ալ չիցէ այս ապշուութիւն մի ՚ի մեծամեծ թշնամեաց ազգին մերոյ . զի մերովս տգիտութեամբ այլք լինան , և մերովս կորստեամբ այլք փարթամանան :

Այսպէս զինչ տեղի զարմանաց . ոչ ապաքէն և ՚ի ձեռնարուեստ գործս նոյն կուրութի տեսանի մտաց . քանզի յոլովք չտեսանեն և չառնուն ՚ի միտ զխոշորութիւն և զանհարթութիւն առտնին իրաց , բնակութեանց և կարասեաց . և իցեն շատք ևս որք զիրեանցն ՚ի վեր դասեն քան զերոպացի ճարտարացն արուեստս : Ալ յայն ժամանակս հասեալ մեր , յորս Ալլարոպ ամենայն արուեստից լրումն թուի կատարելութեան , մերքն զետղառեալ դադարեն տակաւին ՚ի նախնումն անարուեստութեան : Արդ ինձ թուի՝ թէ չիք թշուառութիւն մեծ քան զայս , եթէ չկարիցեմք առնուլ ՚ի միտ զթշուառութիւն մեր ըստ ուսման և ըստ արուեստից : Ալ ըստ քաղաքականութեանն ևս արդեօք այս պայման է մերոցն . այլ անձկութիւն

քարտենիս չթողացուցանէ ինձ ընդ-  
լայնել յայս խնդիր :

Արդ տեսանես, ո՛ր ազգասերդ, ե-  
թէ յոր պայման վնասուց ածեալ ձգե-  
ցին զմեզ վրդովմունքն հանապազօ-  
րեայք և անուսումնասէր ժամա-  
նակքն : Աողովուրդ՝ յորոյ 'ի սրտի  
չիջեալ է փառացն տենչ, ժողովուրդ  
վհատեալ, ժողովուրդ երկչոտ, և ժողու-  
վուրդ ապշեալ . այս են ահա հանգա-  
մանք արդի ժամանակաց :

Բ . Աղքատութեան աղէտք : Տեսի  
անդաստան ցորենոյ անարդիւն . ա-  
մենայն ցորեանքն համատիք էին և  
միաչափք . յամենայն դոյզն հողմոյ  
միանգամայն ծփէին, խոնարհէին  
կանգնէին և տարուբերեալ տատա-  
նէին : Ար երբեմն զի այս անդաստան  
ապականէր 'ի հեղեղէ ուղիսօրէն 'ի  
վերայ յարուցելոյ, և այլ երբեմն երէ-  
վայրի ոտնակոխ զայն առնէր . որով  
վտիտ և ազազուն լինէր, և ոչ բաւէր  
զայլս կերակրել : Այս տիպ օրինակի է  
ահա և ժողովրդեան մերոյ ըստ աղքա-  
տութեանն, որ հազիւ բաւէ հանդուր  
ժել հարստահարութեանց հեղեղա-  
բար 'ի վերայ խուժելոց : Աթէ այս  
ժողովուրդ չբաւոր հազիւ կարէ ըզ-  
կարևոր պէտսն հայթայթել, զիարդ  
կարասցէ ձեռն տալ այլոց 'ի զարգա-  
ցումն ուսմանց և արուեստից . առ որ  
յորով վարժոցաց, դպրոցաց և կրթա-  
րանաց պէտք են : Աողովուրդ անինչ  
ոչ 'ի ձեռն տալ, այլ օտարին ձեռն-  
տուութեան կարօտի . քանզի աղքատն  
ընդունող է և ոչ տուող :

Յորժամ ջերմ ոգիք ազգասիրու-  
թեան 'ի մեզ արծարծանիցին, զար-  
մանամք եթէ ընդէր ամենեքին միան  
գամայն 'ի փոյթ զարգացման չվա-  
ռիցին . և միթէ ոչ յանխորհուրդս .  
սակայն և այս ճշմարիտ է, զի ժողու-  
վուրդ աղքատ գոհութեամբ տանի  
կարօտոյ . ըզձիցնորա չափ գոյ և սահ-  
ման, և ոչ երբէք ակն ձգեալ յան-  
յուսալիսն 'ի վեր վազէ : Աէր յառա-  
ջացման ոչ միայն քան զկար նորին,  
այլ և անդր է քան զհասողութիւն

մտացն . քանզի կնիք ամենայնի ար-  
ծաթ՝ բացէ 'ի բաց զարհուրեցուցանէ  
զնա : Արդ եթէ համարեսցուք թէ  
աղքատութիւնն առ հասարակ կա-  
լեալ է զազգս մեր, և մեծ կէսք կա-  
րօտք ձեռին օգնականութեան, ապա  
թուի թէ ազգն ինքնին չկարասցէ  
բառնալ զաղէտս անձին իւրոյ :

Այսպիսի են ահա աղքատութեն  
աղէտք . որ և ոչ դոյզն խոչք են յա-  
ռաջադէմ զարգացման ուսմանց և  
արուեստից . յոր մեքս՝ յանձն առեալ  
եմք պարապել և 'ի վերջնում մասին :

Գ . Աղքատութեան եղբարց : Աստ ուզ  
զակշիւ համարոյ արդի աշխարհագի-  
տաց՝ թիւ ազգին մերոյ ոչ ինչ առա-  
ւելու քան զերիս կամ զչորս միլիոնս :  
Ապա ուրեմն երեք կամ չորք միլիո-  
նիւ չափ եղբարք են մեր՝ համահարք,  
ընտանիք, արենակիցք, միոյ ծնողի  
հարազատ ծնունդք . ո՛վ եղբայրու-  
թիւն բարեբաստիկ, ո՛հ քաղցր յի-  
շատակ . . . Արդարև առ համեմատու-  
թեամբ այլոց ազգաց մեծամեծաց չէ  
ինչ, սակայն և ոչ դոյզն ժողովուրդ .  
մանաւանդ թէ եռանդուն և գործօն  
բարուքն 'ի վեր է քան զբազում ա-  
զինս մեծամեծս, զի սակաւութեն մե-  
ծամեծ գործս տանի 'ի գլուխ :

Ահումն յաւուրս բարեբաստութե  
այս հօտ փոքրիկ ընդ միով տաւաղէր  
գաւազանաւ . միմեամբք ջեռնուին,  
'ի միմեանս գթային՝ գրգային, մի-  
մեամբք փառաւորէին, և 'ի վշտանալ  
միոյն ամենեքին միանգամայն գորո-  
վէին աղէկէզ . իսկ 'ի յետին ժամա-  
նակսն հարաւ հովիւն և ցրուեցան խա-  
չինքն : Այս է ահա նախկին կործա-  
նումն մերոյ ազգիս : Այլ թէպէտ 'ի  
բնէ զարմանալի է ազգ մեր համբե-  
րատար ժուժկալութեամբն, սակայն  
երկայնմտութիւն նորա պարտեցաւ  
ինն 'ի յաղթ և 'ի բռնաւոր տառա-  
պանացն յարտաքնոց անտի 'ի վերայ  
հասելոց . քանզի այն ինչ խուռն դի-  
մեցմունք աշխարհաւեր հարուածոց  
'ի վերայ հասանէին, այն ինչ բախին  
և դղրդումն հայրենի պարսպաց ժա-

մանէր 'ի լսելիս մերոցն , զահի մեծի հարեալ ամենայն հայ որեար , հարթնուին սոսկային և զերեսս հաստատեալ 'ի փախուստ խուճապէին : Եւ զի ընդ երկար ձգեցան աղէտք տարակուսանացն , ամենայն ոք սովորեցաւ զանձն և զընտանիս ժողովել ուրեք՝ անտես զայլս արարեալ : Եւ ահա սովիմք ևս կրկին անկաւ , և 'ի բազումն կոտորեցաւ ոգին ազգային , և յօտարածին և յայլալեզու առաջնորդութիս 'ի բիւր կերպարանս յեղափոխեցան ազգային օրէնք և բարք և սովորութիւնք : Եւստի մուծան 'ի մեզ փոփոխմունք տարազուց և առտնին կարգաց , աստի աղաւաղութիւնք բարուց և բարբառոյ , աստի հովութիւն յիրերաց , աստի արհամարհութիւն , աստի գրգիռք , համայն ասել՝ աստի երկպառակութիւնք և թշնամութիւնք քաղաքի ընդ քաղաքի , դասու ընդ դասու , և կողման լի կողման : Եւստի կբաժանմունք չեն դոյզն հարուածք վասն փոքու ժողովրդեան :

Եւ ահա տեսանես , զի ոչ այնքան վայրացն տարակայութիւն , և ոչ բաժանումն եղբարց հարազատաց փասաբերք կարեն լինել մերումս զարգացման , որպէս հովութիւն յիրերաց , ինքնարգոյ շահախնդրութիւն , ինքնուրոյն կեանք , հասարակաց բարեաց լինելն ապաշան :

Են են և որք ազգասիրութե վառեալ տենչիւ , ցտասն և ցերկոտասան միլիոնս ճգնին հանել զհամար հայկազն ժողովրդոց : Եւ աղէ եկ ասա դու ցիս . թէպէտ ճշմարտիւ այդ այդպէս իցէ , զինչ շահ և 'ի յուլութեանէ աստի եղբարց՝ եթէ չիցեմք եղբայրացեալք զօգիւ սիրոյ : Եղբարք ազգակիցք տարանջատք յիրերաց՝ նրման են քարանց հեղեղատի , որ առանզուգութեանն գետահետեալ վարին 'ի ծով անդերծանելի վշտաց . իսկ շաղեալք մածուցեալք 'ի մի , թումբ ա մուր գործեն ընդդէմ յարձակմանց ջուրց , աղետից ասեմ և երկպառա-

կութեանց :

Եւստի իսկ զփորձ առաք ցարդ՝ թէ քանի փնաք ծնան յանմիաբանասեր ոգւոյ , և քանի՞օն փնաք գործեցան այնու յառաջադիմութե ուսմանց և արուեստից : Եւրոպականք ինքնին վկայեն՝ թէ պատճառք զարգացման ուսմանց և արուեստից առ նոսա ոչ այնչափ պետութիւնքն կացին և գանձք արքունի , որչափ համամիտ խորհրդակցութիւն և գործակցութիւն արեւակից եղբարց : Եւրոպ և առ յառաջացումն ազգի միոյ յետնելոյ ոչ ինչ օգտեն անձնաշահութիւն և ինքնուրոյն խորհուրդք , այլ միաբանականն և հասարակասեր ոգի :

Եւստի ահա երեք են գլխաւոր խոչը խափանարարք յառաջադիմութե մերոյ , զորոց մինչև ցայս վայր խօսեցաք սակաւութ . այսինքն են ժամանակացն հանգամանք , աղքատութե աղէտք , և օցտումն համազգի եղբարց յիրերաց : Եւ ահ հիքութեան մերոյ . . . Երեւ զմտաւ ոք ածիցէ զանցեալ աւուրմն , և ապագայիցն արդեօք գուշակ լեալ տխրիցի : Եւ կայն ոչ առողջ մտաց է , զյետնութիւն անձին և եթ խորհել , և յուսահատ 'ի նոյն վարանիլ : Եւ մի անգամ յախտ ցաւոց պաշարեալ իցէ , և զանձին խօթութի անբուժելի վարկուցեալ տխրիցի , հոգայցէ և յերկիւղէ մահուն տաքնապիցի , 'ի զուր է ամենայն ճիգն բժշկաց , ընդվայր և դեղոցն դարմանք : Եւարձեալ եթէ ուրուք խեթ ընդ ոտն հարկանիցի , արդարեւ ընդ գետին զարկուցեալ խափանի յընթացիցն առ վայր մի . այլ ոչ եթէ վասն այսորիկ յետս կասի յառաջադրութեանէ մտացն : Հասկա և դու մատնեալ մի անգամ յաղէտս անուսումնութեան , մի խղճեր ընդդէմ խութիցն քաջութիւն մարտնչել : Եւ անցելովքն յիշատակօք հանապազ մեռանիցիս :

Եւ գուցեն դարմանք աղետիցս , հարցանիցեն արդեօք ազգասերք : Եւստի , գոյ , և ամենեւին իսկ գոյ . զոր

և մեք անպատրուակ դիցուք առաջի յերրորդումն հատածի . և յուսամբ ոչ անհնարինս անդանօր և ոչ անախորժս ազգասիրաց բարբառել :

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

Ղ ա մ Բ որ դ :

Ղ Ա Մ Բ Ո Ր Դ Ո Ւ Թ Ե Ա Ն Ս մէջ օր մը իրիկուան մոլթ ատեն գէշ ու վտանգաւոր տեղ մը ինկայ , վախէս սկսայ շուտ քալել ու հեւալով փախչիլ . բայց եկուր տես որ ոտքիս տակը կրակած աւազ էր , չորս դիս փշոտ մացառներ ու թուփեր . մէկ դիէն վախ , մէկալ դիէն տանջանք : Երկինքն աղուոր էր , բայց ինչ օգուտ երկնքին պարզութիւն ու աստղերուն գեղեցկութիւնը , երբ որ աչքս գետնէն վեր չէի կրնար վերցնել : Գիշերուան անոյշ հովը չկրցաւ խեղճ ճամբորդիս քրտինքը զովացնել , որ սրտիս տագնապէն դուրս կու տայի : Բանի որ առաջ կ'երթայի , կարծէի թէ ան տանջանքիս վերջը հասեր ու հանգստեանս ժամը կը մտնենար . վասն զի տեսայ որ դիմացէն արեւելեան դին կարմրեցաւ , աստղերն սկսան իրենց փայլունութիւնը նետել , և գետինը քիչ մը աւելի պայծառացաւ : Ետով իմ վտանգաւոր ճամբաս աւելի իմացուեցաւ . բայց ես ուրախութենէս ինքզինքս կորսնցուցած՝ կանչեցի . փառք Ետուծոյ որ հասայ իմ քաղցր հայրենիքս . ահա հայրենեացս աշտարակները հեռուէն կը տեսնուին , պարիսպներուն վրայ խաղաղութեան ճերմակ դրօշակները կը ծածանին . ահ երթամ , հայրենեացս գիրկը իյնամ ըսելուս չմնաց , մէյմըն ալ ետեւէս արեւմտեան լեռներէն յանկարծակի հասաւ մոլթ ու խաւար մառախուղ մը . ետեւ դառնամ ու նայիմ որ երկինք ու երկիր , հայրենիք , ընտանիք , ամէն բան մը շուշին մէջ ծածկուեցան , և իմ ու-

րախ սրտիս վրայ թանձր տխրութիւն մը նստաւ : Տես իմ յուսահատութիւնս . կարծես թէ աչքիս դիմացը վարագոյր մը իջաւ , երկինքն ու հայրենիքս ինծմէ առաւ : Ուրիշ բան չէի տեսներ , բայց միայն ոտքիս տակի փոսերն ու վտանգները . կը տեսնէի միայն աւազին վրայ օձերու սողացած ճամբան ու գազանաց ոտնատեղիքը . քանի՛ քանի անգամ վախն ու յոյսը զիս մահուան դուռը տարին ու բերին : Ես վախերէն աչքերս մթնցած ու ինքզինքս կորսնցուցած՝ արեւելք կամ արեւմուտք երթալս չէի գիտեր . ասանկ տեղ կենալը վտանգաւոր , քալելը վտանգաւոր . բայց այնչափ փախչումով քալեցի որ կարծէի թէ ալ հիմա կը հասնիմ ու ցանկալի հայրենեացս պարիսպներուն կը դպչիմ : Բայց ափսոս որ գնացի ինկայ փշոտ թուփերուն մէջ . աս տեղէն խալըսիմ ըսելով քիչ մըն ալ առաջ երթալուս սե արջ մը տեսայ , որ փուշերուն մէջէն խշրտալով իմ վրաս կը յարձուկէր . անկէ զարհուրելով կանչուրուտեցի փախայ՝ վհի մը հանդիպեցայ , վհէն փախչիմ ըսելով ժայռի մը զարնուեցայ : Արը չխալսելու գահավէժ , դիմացս չմտենալու ապառաժուտ լեռներ . ահ , ինչ ընեմ , չորս կողմէս վտանգները զիս առեր են . ինչ ընեմ , ո՞ւր դառնամ . . . ետեւէս մահ , առջեւէս մահ . գետինը զիս կը լնէ կ'ուզէ , երկինքը վրաս փլ չի կ'ուզէ . ալ ճար չկայ , վար նետուիմ խալըսիմ . . . ըսելուս չմնաց , արթընցայ որ երազ է :

Երազ էրազ էր տեսածս , բայց շատ նման օրինակ է տգէտ մարդուն վիճակին , որ մոլթ տեղուանք կը քալէ , ու փուշերու մէջ կը պտրտի . ատեն կուգայ որ կարծես թէ իր բաղդին արեւը խնտումով մը տեսնելու կ'ըլլայ , բայց վրան վարագոյր մը կը ձգուի , և իր մտքին վրայ նոր մշուշ մը կը պատէ . խելքի ու բարոյականի ուղիղ ճամբաները կը կորսուցնէ , փոսէ փոս ու վտանգէ վտանգ կը գլորի . առջի բե-